



Հեռարձակման խորացված դասընթաց
<<Պատմելով մի մարդու պատմություն>>
և

<<ԵՄ-Հայաստան փոխհարաբերությունների լուսաբանում>> թեմաներով

Հունիսի 23-25, 2017թ, Երևան

Դիմելու հրավեր

2017 թ. հունիսի 23-ից 25-ը Եվրոպական միության-ի կողմից ֆինանսավորվող Open Media Hub ծրագիրը կազմակերպում է հեռարձակման խորացված դասընթաց՝ նախատեսված հայկական ՉԼՄ-ները ներկայացնող 15 հեռուստալրագրողների /օպերատորների/ մոնտաժողների համար: Լուրերի պատրաստման եռօրյա դասընթացը միտված է մոնտաժի, նկարահանման, գրելու և խմբագրելու հմտությունների բարելավմանը:

Դասընթացի ընթացքում մասնակից հեռուստաթիմերը կթողարկեն ազդեցիկ և տեղեկատվական տեսանյութեր, որոնք համապատասխանում են ձեր ՉԼՄ-ի պահանջներին և լուրերի հեռարձակման ձեր ձևաչափին: Պատմությունները կհեռարձակվեն ինչպես ձեր ՉԼՄ-ներով, այնպես էլ հասանելի կլինեն Open Media Hub հարթակում և կայքում՝ մասնակիցների միջև տեղական և միջազգային մակարդակներում փոխանակման համար:

Պատմությունների թեմաները հետևյալն են՝ **«Պատմելով մի մարդու պատմություն»** և **«ԵՄ-Հայաստան փոխհարաբերությունների լուսաբանում»**:

Դասընթացի առանցք կհանդիսանա նաև **«Լինել 20 տարեկան»** շարքը : Open Media Hub-ի կողմից մշակված և ներկայացված «Լինել 20 տարեկան» շարքը կազմված է 90 վայրկյան տևողությամբ կարճ պատմվածքներից, որոնք պատկերում են Եվրոպական հարևանության երկրների երիտասարդության կյանքն և ձգտումները: Յուրաքանչյուր պատմություն հետագայում կարող է օգտագործվել բոլոր մասնակիցների կողմից կամ որպես առանձին պատմվածք կամ որպես պատմվածքների շարք. Սա մենք իրականացնելու ենք Եվրոպական հարևանության 17 երկրներում, որտեղ ծավալվում է մեր գործունեությունը: Ավելի ուշ կհայտարարվի մրցույթ, որի հաղթողները այդ շարքի պատմվածքները թողարկելու համար կստանան ֆինանսավորում:

Դասընթացը կվարեն լրագրողներ Ստեֆան Բենտուրան և Սայմոն Հասթինգը՝ Նինա Իսկանդարյանի աջակցությամբ:

Պատմվածքները կքննարկվեն և կընտրվեն դասընթացից առաջ՝ Ստեֆան Բենտուրայի հետ համագործակցելով: Դասընթացի ընթացքում մասնակից թիմերից պահանջվում է ապահովել իրենց սեփական նկարահանման և մոնտաժման սարքավորումը:

Դիմելու համար մուտք գործեք www.openmediahub.com կայք: Դիմումների վերջնաժամկետն է՝ 2017 թ. հունիսի 9՝ ժամը 11:45: Այն ՁԼՄ-ները, որոնք մասնակցել են նախորդ ծրագրերին և հուշագրեր են ստորագրել Open Media Hub-ի հետ, կդիտարկվեն առաջին հերթին:

Open Media Hub ծրագիրը նպատակ ունի բարելավել լրագրողների և ՁԼՄ կառավարիչների մասնագիտական հմտությունները և աջակցել տեսաձայնային բովանդակության և առցանց նյութերի պատրաստմանը Եվրոպական հարևանության երկրներում, ինչպես նաև նպաստելու անկախ ՁԼՄ-ների զարգացմանը: Ծրագիրն իրականացվում է կոնսորցիումի կողմից՝ [Thomson Foundation](#)-ի գլխավորությամբ և ներառում է եվրոպական այնպիսի ՁԼՄ կազմակերպություններ, ինչպիսիք են [France Médias Monde](#), [European Journalism Center](#) և [Free Press Unlimited](#):